



ԺԶ ՏԱՐԻ , ԹԻԻ 9 .

ՌԱՓԱՅԵԼԵԱՆ ՉԱՐԺԱՐԱՆԻՆ

U. G. U. 4. 6. P. S. U. 3

ՏԱՐԵԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԻՒՆԸ

Օրագրիս մէջ երբեմն երբեմն մեր
ազգին հիմակուան վիճակին վրայ խոր
հրդածելով՝ ուրախ սրտիւ մը վկայե-
րէք թէ հայ ժողովուրդը այսօրուան
օրս յառաջագիմելու վրայ է։ Արդարեւ
դիւրին էր հայրենասէր ոգւոյ մը ազ-
գասիրական զգացմունք ունենալ ու ազ-
աւերելոյթ նշանով մը խալ ընդունելուն՝
պիտի քաջալերիչ աւետիւ երբեք ու այս-
կայն մենք անխաբէր պիտի մը տալ։ Սա-
կարաւ մը ունինք ձեռք ու հաստատուն
հիմարութեանը, հուրընդիս ըսածնուս
տխարակութեան՝ կը տեսնենք որ դաս-
մը գրաւել ազգը մերը սկսել է տեղ
ընդլայն ու աւելցնել մտաց մէջ, և բա-
կը սկսի տրուել տարին զիտութեան յարգ
ընդլայն դալիւ. անոր համար ալ եւ-
նախանձ մը անտխարակութեան բարի
խել հայր եւ կը նշմարուի, և իւրաքան-
որդւոյն գեղեցիկ ապաւ-

նի մը պատրաստել կը փափագի կըթու-
թեան միջոցովը, և կը ցանկայ գովելի
փափաքով մը՝ ազգային դաստիարակաց
ձեռքով ազգային անձ կազմել տալ իր
զաւակը։ Սենք մեր կողմանէ չնորհա-
պարտ ու երախտագէտ ենք մեր ճշմար-
տասէր հայրենակցացը, որ այսպիսի
աղնուական վստահութեամբ մը պա-
տուէր են Սխիթարեան Սիաբանու-
թիւնս՝ իրենց օրդիքը, կամ լաւ ևս ը-
սենք՝ իրենց ազգատոհմներուն ակնկա-
լութիւնքը մեր խնամոցը յանձնելով։
Բայց կարելի է որ ոմանց մտքէն անցնի
թէ ահաւասիկ անդադար չողիէ թուե-
րով թուող նաւեր հեռաւոր աշխարհը-
նէր կը տանին մեր տղայքը, ու հազիւ
երկայն ժամանակներէ վերջը ծնողաց
տեսութեանը կը դարձնեն զանոնք,
և դարձեալ ուրիշ հիւրեր կը գողնան

մեզմէ , և յետ այսր ամենայնի՝ զարմա-
նալի տարբերութիւն մը չտեսնուիր ազ-
գերնուս վրայ : Եւսպէս մտածողները
պէտք է գիտնան որ ազգ ըսածդ այն-
պիսի մեծամարմին նաւ մըն է , որն որ
վաղցրնելու համար թեթեւ քամիներ
չեն բաւեր . ազգի մը յառաջադիմու-
թիւնը առանց շատ դարերու ճակատ-
ները մաշեցընելու չպայծառանար , և
թէ որ շուտով մը սկսի փայլիլ՝ հաւտա-
լու չէ , փայլակ մըն է անիկայ որ կը
սահի կ'անցնի ու հետք չթողուր : Եւ
հասիկ քիչ օր է որ Ռափայելեան վար-
ժարանին հինգերորդ դասուն աշա-
կերտները յետ աւարտելու իրենց ու-
սումնական ընթացքը՝ հայրենեաց և
ծնողաց գիրկը դարձան . ո՞վ կրնայ հաս-
տատել թէ ասոնք և ասոնցմէ ետեւին-
ները յանկարծական յեղափոխութիւն
մը պիտի ներգործեն ազգերնուս մէջ .
ընդ հակառակն՝ դարձած պատանիքը
կերթան կը թաղուին ազգային ընդ-
արձակ շրջասփիւռին մէջ , ու սովորա-
կան մարդկանց կարգը կ'անցնին : Եւ
սակայն ասոնցմէ իւրաքանչիւրը մէկ-
մէկ իւր ֆարեր են որ ազգային լուսաւորու-
թեան շրջանէն անցնողներն . որով
ու անոր հիմերը կ'ամրացնեն . որով
հետեւ ասոնց արեան հեւքը կը թուլ-
թուլուի : Եւստի որ ինչպէս որ ինչ
ու գիտութեանց սերը միանալով՝ այս
ու ծառայութիւնը կ'ընեն ազգին , որ
սերը յաջորդաբար կ'անցնի իրենց սերուն-
դեանը իբրեւ հայրենական ժառանգու-
թիւն , և առաւելագոյն ևս զարգաց-
մամբ . և երբ այն օրը հասնելու ըլ-
լայ , և յուսամբ անտարակոյս որ պիտի
հասնի , որ ալ ազգային մարմինը ինքն
իր մտաւորական ուժը բանեցընէ և
գրաւորական ու գիտնական ասպարէզ-
ներուն մէջ յաղթողաբար արշաւէ ,
այն ատեն թերեւս ճանչցուին ու մե-
ծարուին այն առատ ու անխնայ քրտինք-
ներն , որ բազմաշխատ տեսուչք ու ան-
խոնջ վարժապետք թափեր են , կը թա-
փեն ու միշտ պիտի թափեն իրենց ա-
շակերտացը վրայ , առանց գրեթէ ու-
րիշ փոխարէն ունենալու հիմա , բայց
եթէ իրենց աշխատութեանց վախ-

ճանին ազնուութիւնը ճանչնալը :

Ռաստիարակաց Զանքն ու աշխատու-
թիւնները անընդհատ են ըսինք , ու
միակերպ ամենայն դասի աշակերտաց
վրայ , ինչպէս որ յայտնապէս կը տես-
նուի հանդիսաւոր հարցաքննութեանց
ատեն . և ահա այս մօտերս ալ մեր
Սիւրբանութիւնը ներկայ գտնուեցաւ
ու վկայ եղաւ անձամբ Ռափայելեան
վարժարանին վեցերորդ ու եօթներորդ
դասերուն առաջին տարուան աշակեր-
տութեան միջոցին մէջ ըրած յառաջա-
դէմ ընթացքին , և անոնց հարցաքնն-
նութիւնը լսելէն ետքը՝ յայտնեց աշա-
կերտաց իր ուրախութիւնը՝ որ յարգոյ
Տեսչին ու քրտնաջան Վարժապետաց
արդիւնքը կրցան իրենց անձանց վրայ
յայտնի ընել : Իսկ յուլիսի 22ին ալ
մրցանակաց բաշխման հանդէսը կատա-
րուեցաւ , որուն զահագլուխ նստած էր
Վենետիկոյ կուսակալութեան տեղա-
կալը բարձրապատիւ Պիսինկէն կոմսը .
նոյն հանդիսին կը գտնուէին նաեւ ու-
րիշ քաղաքական մեծ աստիճանաւոր-
ներ , ինչպէս Էլթան ու Սարչելլոյ կոմ-
սերը . նոյնպէս գերապատիւ Սորոյ կա-
նոնիկոսը՝ պատրիարքական աթոռա-
կալ Վենետիկոյ , գերապատիւ Պէնձոն
կանոնիկոսը՝ սահմանեալ յետիսկոպո-
սութիւն Էտրիկոյ և Ռովիկոյի , և ու-
րիշ եկեղեցականք , և այլ և այլ պա-
տուաւոր աշխարհական անձինք : Հան-
դիսին արժանապատիւ զահագլուխը
հաճեցաւ մարդասէր քաղցրութեամբ
մը իւրաքանչիւր աշակերտաց իր ձեռ-
քը յանձնել մրցանակները , և գովեց
սիրալիր խօսքերով անոնց ուսումնասի-
րութիւնը : Եւստի վարժարանին մե-
ծագոյն սրահին մէջ զետեղուած զա-
նազան նոր նկարները քննեց , որոնք
հինգերորդ դասին աշխատասիրութիւն
ներն էին , և վկայեց թէ իր ակնկա-
լութենէն վեր էին արեւելեան աշակեր-
տաց այս արուեստին նկատմամբ քիչ
ժամանակի մէջ ըրած այս աստիճանի
յառաջադիմութիւնը . նոյնը վկայեցին
նաեւ ուրիշ հանդիսականք ալ , մասնա-
ւորապէս Պ . Կրէկովիչի քաղաքիս

արդի երեւելագոյն պատկերահանը :
Բայ հանդիսին չբեղութիւն կու տար
նաեւ այլ և այլ երաժշտական գործեաց
ներդաշնակութիւնը , որ ընտիր ու ա-
խորժելի եղանակներով երբեմն երբեմն
կը զուարճացնէր ներկայ եղողներուն
բազմութիւնը : Ս երջապէս , հանդի-
սականք այն աշակերտաց՝ որ Բքրիա-
կան անդորր ամփանց հրաժեշտի վերջին
բարենները կու տային , խրախոյս տուին՝
հայրենեաց մէջ ալ ճոխացնելու իրենց
ամբարած գանձերը , և փոքրագոյն ա-
շակերտներն ալ յորդորեցին որ իրենց
կրթութեան տարիները բեղնաւոր ը-
նեն անշէջ եռանդեամբ մը . և այսպէ-
սով լմնցաւ այս ազգային հանդէսը :

Հայրենիք դարձող հինգերորդ դա-
սուն աշակերտներէն Պ . Սկրտիչ Բ-
ճէմեանը՝ հանդիսին միջոց հետեւեալ
խօսքերովս իր և իր ընկերակցաց սրտին
երախտագիտութեան զգացմունքը կը
յայտնէր :

Մեծարոյ Հարք .

Բռաջի վեհից և իմաստնոց արանց
կացեալ իմ պատկառանք այս առաջին՝
թերեւս և վերջին նուագ , զխոստմունս
մեր և զիղձս արձանագրել ցանկամ .
և եթէ պակասեցին բանք ՚ի շրթանց ,
մեծաբարբառ վկայեսցեն բաբախինք
սրտիս . ինձ շատ է թէ մարթացայց
դոյզն և աղքատ բանիւս՝ յայտ առնել
և խօսն մի զեռանդուն զգացմունս որ
յիս . զգացմունք ընդ երախտիս ընկա-
լեալս՝ յիշելով զանցեալ կեանս մեր ,
զգացմունք դարձեալ նոցին երախտեաց
առ մեզ առատաձեռնեւոց՝ յիշելով զա-
պագայն որ մթին է ինքնին և տխուր :
Վանգի որպէս պանդուխտ ուղևոր ան-
ցեալ ընդ մեծաստուեր հովիտ , և հա-
սեալ ՚ի ծայրն՝ դադար առնուցու , և
զաչս ցաւազինս յետ կոյս դարձուցեալ ,
և ապա ՚ի վեր ամբառնայցէ տեսանել
զխորշակահար զերկայն ուղին զոր ունի
հատանել , և հառաչանս արձակիցէ

յոգւոց հանելով . սոյնօրինակ կամք
և մեք տարակուսեալք հայելով մերթ-
ընդ կրունկն՝ մերթ հանդէպ երեսաց
մերոց . այս է կէտն մեծ , կշեռ զայս
և զայն կեանս : Սինչ էաք ՚ի պարտի-
զի մանկութեան , մինչ խայտայաք ընդ
ծաղկունս , մինչ և էին փշոցն զմա-
տունսն խոցեալ , ամենայն գեղեցիկ
թուէր և խաղաղ , խորհուրդք շողո-
ղունք , փափաքք մեր մանունք որպէս
զսիրտս մեր , զուարթութիւն մեր մա-
քուր և անխառն ՚ի հոգոց . օրհնեալ
աւուրքն՝ որք անցին յուսովք և անմեղ
երազովք . թողումք արդ զժամն ոս-
կեղէնս՝ որք իբրեւ զաստեղս ցլասցին
ապա ընդ նսեմ երկին ապագայ կենաց
մերոց : Արանի որոց թարմ հասակ
զարգացաւ յայս անդորրաւէտ վայր
նժգեհութեան , և չգիտեմ զինչ , որոց
զրկեալ յայս բարեբաստիկ պայմանէ՝
ինքնակամ և անսանձ աճիցեն : Բրդ
առաջի կայ մեզ կեանք նորոգ , կեանք
անստոյգ , և առ դուրս անցելոցն՝ ՚ի միտ
առնումք զքաղցրութիւն նորա . երջա-
նիկ գոլով յայնժամ , անգիտացաք զեր-
ջանկութիւն մեր . այս մարդոյս պայ-
ման . կեանք և երջանկութիւն զուգ-
ընթացիկք միմեանց , ընդ նուագել
միոյն՝ նուագէ և միւսն :

Ղակատագիր մեր ընդ քօղով գաղտ-
նութեան ծածկեալ՝ մղէ վանէ զմեզ
աստի անդր . լսեմք ՚ի հեռուստ զձայն
նորա դիւթական , և սիրտք մեր ձը-
գեալք զհետ նորա ընթանան . սակայն
ուր առեալ տանի զմեզ . միթէ առաջ
նորդէ՞ յաշխարհ գեղեցիկ և յարգա-
րեալ , կամ ՚ի հայրենիս՝ որ գրկաբաց
մնասցէ մեզ : Ս տայր և լսեաք զհայ-
րենեաց ձայն . արիազոյնք թերեւս յայն-
ժամ և զուարթագոյնք , գիտէաք և
մեք նուիրել ընդ իմացականին և զնիւ-
թական կեանս մեր ՚ի սէր նորա : Ս ը-
ճիւ է սահմանեալ աստուածուստ , և
առաքինութեան երբեմն և իմաստու-
թեան կալ նշաւակ անիրաւութեան և
հալածանաց . այլ ըստ ինձ ծանրագոյն
ևս է և տարակոյս իսկ և չգիտեն թէ
զոր ընդունելութիւն գտցին այսօրիկ :

Լայկէս զի եթէ ոչ բնածին իմն և գովելի բերումն ողորդելով ածեալ տանէր զմեզ յոր տանին, չգարթնուին արդեօք 'ի մեզ և ոչ դոյզն անգամ իղձք և յօժարութիւն հեռանալոյ 'ի սիրելի վայրաց մանկութեան մերոյ և երջանկութեան : Եւ խնայել ապա 'ի վերայ անդնդոց անստուգութեան և փարեալ զսեամբ նախախնամութեան, թողցուք սահել 'ի վերայ գլխոց մերոց զալիս աղցաւոր կենցաղոյս . շատ է զի երկիւղիւ և խնամօք պահել մարթասցուք զսրբազան սերմունան՝ զոր ընկալաք աստէն 'ի սիրտս մեր և 'ի միտս . և նոքին զքաղցր բարերարաց մերոց զյիշատակ անջնջելի և ջերմաջերմ տարցեն ընդ մեզ և մինչև ցծագոս աշխարհի :

Սիրողք մարդկութեան և ժողովըրդեան ազգի իւրեանց, արք երկնազգեցիկք՝ կանգնեցին ապաստանարանս մանկութեան, ուր սնուցեալ սիրով զսիրտ նոցա 'ի մեղր և 'ի կաթն գիտութեան, թուցանեն իբրև զաղաւնիս սպիտակս 'ի քիւս հայրենեաց : Եկեսցէ օր և ամենայն կանխակալ կարծիք մերժեալ տարագիր, ծանուցին ստոյգ վաստակք, և համբերութիւն լռիկ կալցէ զիւր յաղթանակ . և քան զազգն և քան ըզմարդկութիւն համբէն՝ պսակեսցեն երկինք զիւր հաւատարիմ ծառայս :

Յետ շնորհս ունելոյ ազգասէր հիմնադրաց մերոց, յորոց 'ի բարութիւնս վայելեցաք առատապէս, ճանաչեմք և զմեծավաստակ արդիւնս և արանձին հարց մերոց առաքինեաց, և երախտապարտ սրտիւք փոխարինել բաղձամբ բարութեանց, եթէ զօրիցեն բանք : Բանգի դուք, ազնիւ հարք, 'ի պարտս սրբազան և 'ի ճիգն մեծաքիրտն նուիրեցէք զանձինս ձեր 'ի կրթութիւն մեր, տառապեցայք 'ի վաստակս ծանունս, 'ի մեզ մթերեալ զգիտութիւն ձեր, զկրթութիւն և զհամբաւ, տալով մեզ երեւել յաշխարհի արժանաւոր որդիք Մխիթարայ և գովելի մասն սիրեցելոյ ազգին :

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

2

Մանչ գառակ :

Նախընթաց գլխոյն մէջ՝ ընդհանրապէս տղու վրայ խօսեցանք, առանց սեռի զանազանութիւն մը դնելու . ինչ որ հոն զրուցեցինք՝ ճշմարիտ են թէ պզտի մանչ տղու մը և թէ պզտի օրիորդի մը համար : Եւ այց կամաց կամաց հասակներնուն հետ տարբերութիւններն ալ կը յաճախեն, ու մանչն ու աղջիկը՝ իրարմէ բոլորովին տարբեր տեսութեանց և խորհրդածութեանց առիթ կու տան : Եւս գլխոյն մէջ մանչ տղու վրայ պիտի խօսինք, իրեն այն հասակէն սկսելով՝ յորում կերպով մը կը սկսի իր գործոյն երաշխաւորութիւնը վրան առնուլ :

Մինչդեռ չենք խօսած այն որոշիչ բաժանման վրայ՝ որ սովորաբար կը պատահի գերդաստանին և տղուն մէջ, քանի մը խօսք զրուցենք այն առաջին բաժանման վրայ՝ որ ընդհանրապէս դժնդակ է թէ մարց և թէ տղայոց, և սակայն որչափ ալ անտանելի երևնայ՝ այլ իրաւացի, օգտակար և յաճախ հարկաւոր բաժանում մըն է : Եւսք ուզեր մարց գործը պատրել՝ դպրոցական կեանքին քաղցրութիւնը չափէն աւելի մեծցընելով, ու անոր ուրախութեանցը, հաճոյից և խաղերուն նկարագիրն ընելով : Եւսք ուզեր ըսել թէ դպրոցական կեանքը՝ մարդկային կենաց ամենէն աւելի քաղցր միջոցն է . այլ մանաւանդ թէ կը զրուցենք որ դպրոցական կեանքը լի է աշխատանք և անհաճոյ, և անոր համար աղէկ է : Եւսք պրոցի կեանքն իր տխրութիւններն ունի . այն երկայն ժամերը՝ յորս տղուն աչքը սևեռած կեցած են գրքի մը վրայ, և մտքովը գերդաստանին մէջ կը թա-